

«ՋԱՆ ԹԱՎՐԻՉ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԸՆԹՐԻՔ ՊԱՐԱՅԱՆԴԵՍԸ

Մարտ 20ին Կլենտյլի Civic Auditorium-ի մեջ «Ջան Թավրիչ» կազմակերպության վարչութեան կողմէ պատրաստուած էր ընթրիք-պարահանդէս, որուն նպատակն էր ի մի հաւաքել Թաւրիզահայութիւնը եւ ի յիշատակ Թաւրիզահայութեան կողմէ շատ սիրուած՝ Երջանկայիշատակ Առաջնորդ Սրբազան Ներսէս Արք. Մելիք Թանգեանի, ձեռնարկին շահոյթը պիտի ուղարկուի Հայրենիք կրթա-մշակութային կեդրոնի կառուցման համար: «Ջան Թավրիչ» կազմակերպութեան Ատենապետ՝ Ալպէրթ Աւանեսեանի վկայութեամբ, այս ձեռնարկը արդէն հինգ տարիներէ ի վեր կը շարունակուի մեծ խանդավառութեամբ:

Առաջնորդարանի կողմէ ներկայ էին Արժ. Տ. Մամբրէ Քհնյ. Քեսապեան եւ Բրշ. Յովնան Սրկ. Վարդանեան: Տէր Հայրը Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութիւնները եւ սիրալիր ողջոյնները փոխանցեց Պրն. Ալպէրթ Աւանեսեանին եւ Վարչութեան: